Ինձ պատմել է Բիկր Ի. Հայդամ, թէ՝ ինչպէս նա Նուֆայլ Աբդալլահ Ի. Մուհամմեդից եւ սա Սուլէյման Ի. Ալթայից լսել է՝ երբ Իյադ Ի. Ղանմ՝ Աբու Օբայդայից ուղարկուած՝ նուաճեց Ուռհայ,[1] նա կանգ առեց քաղաքի դրանց առջեւ՝ մոգ նժոյգը նստած. բնակիչ չքխաղաղութիւն կապեցին նորա հետ այն հիման վերայ, որ նոցա մնայ իրենց տաճարը իւր շրջակայքը հանդերձ, որ նոքա (նոր) եկեղեցի չկառուցանեն, բացի այն, որ նոքա ունին, որ նոքա օգնեն մուսլիմներին թշնամեաց դէմ. իսկ սոքա նոցա կը թողնեն այն, ինչ որ նոքա պարտաւոր են ըստ պայմանին. սակայն բնակիչաց չի տրւի հովանաւորութեան դաշն: Միջագետաց բնակիչք ընդունեցին նոյն պայմաններն, որ եւ Ուռհայեցիք:[2]

Մուհամմեդ Ի. Սադ կը պատմէ, թէ Վակիդի կը հաստատէ այն, ինչ մենք Իյադի գործոց մասին լսած ենք, այսինքն՝ Աբու Օբայդայ վախճանեցաւ 18 թ. ժանտախտից Ամմաւասում,[3] կառավարիչ նշանակելով Իյադին: Այս ժամանակ նորան հասաւ Օմարի թուղթը, թէ նա նորան կը կարգէ Հիմսի,[4] Քիննասրինի[5] եւ Միջագետաց վերայ. Իյադ արշաւեց Միջագետք 18 թ. Շաբան

---

1 Հնոց Ἔδεσσα (Ptol. V, Plin. V, VI, Steph. Byz.: Ἔδεσσα, πόλις Συρίας, Strabo), Edessa (Amm. Marc., Orpha (Cario Chron. V) Ըստ Istaxri տեղն կութեան, քաղաքս ուներ աւելի քան 300 վանքեր

2 Այս աւանդութիւնն Ուռհայի առման մասին բաւական կը տարբերի երկրորդ աւանդութիւնից (տես ստորեւ), որ աւելի մանրամասն կը հանդիսանայ:

3 Jakut պաղեստինի քաղաքներից մէկն կ'անուանէ:

4 Ἔμισα (Ptol.), Ἔμισα, πόλις Θοινίκης (Steph. Byz.), Ἐμεσηνοί (Strabo), Emesa (Amm. Marc.). այժմ Հոմս:

5 Հնոց Χαλκίς (Ptol. V, Strabo, Steph. Byz.). Chalkis (Plin.).